ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2007

«ՀՀ պետական պարտքի 2007թ. տարեկան հաշվետվությունը» հրատարակվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ - գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի և պետական պարտքի կառավարման վարչության պետ Ա. Մարգարյանի ընդհանուր խմբագրությամբ:

Նյութերը կազմել և թարգմանել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության աշխատակիցներ Հ. Կարապետյանը, Ա. Մարությանը, Ս. Մկրտչյանը, Ա. Համբարձումյանը, Ա. Եգանյանը, Շ. Մկրտչյանը, Ս. Խանվելյանը, Ք. Խաչատրյանը, Գ. Վարդապետյանը, Ս. Իսրայելյանը:

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Օգտագործված հապավումներ

ՆՊՊ-ներքին պետական պարտք
ՊՊ-պետական պարտատոմսեր
ՊԿՊ-պետական կարճաժամկետ պարտատոմսեր
ՄԺՊ-միջին ժամկետայնության պարտատոմսեր
ԵՊ-երկարաժամկետ պարտատոմսեր
ԽՊ-խնայողական պարտատոմսեր

2007թ. հունվարից պետական կարճաժամկետ, միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային, միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերից բացի ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը սկսեց թողարկել խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր, որոնք ի տարբերություն թողարկվող պարտատոմսերի ոչ շուկայական արժեթղթեր են:

1995-2007թվականներին ներքին պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները՝ ծավալը, ժամկետայնությունն ու եկամտաբերությունը դրսևորել են հետևյալ միտումները (տես գծ.1).

Գծապատկեր 1

ՆՊՊ-ի ծավալները, ժամկետայնությունը և եկամտաբերությունը 1995-2007 թթ.



ՀՀ ներքին պետական պարտքի կառավարման արդյունավետության մասին են վկայում 2001թ-ից սկսած ՀՀ պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերի (տոկոսավճարներ) տարեցտարի նվազումը և ներքին աղբյուրների հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորության մեծացումը (տես աղ. 1 և աղ. 2):

Աղյուսակ 1

ՆՊՊ-ը բնութագրող հիմնական տնտեսական ցուցանիշները 1995-2007թթ.

(տոկոս)

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
ՆՊՊ/ՀՆԱ	0.04	1.55	2.88	3.06	3.16	2.89	3.10	3.00	2.65	2.43	2.29	2.66	2.11
Սպասարկում/ՀՆԱ	-	0.09	0.56	0.98	1.09	0.91	0.56	0.44	0.34	0.28	0.23	0.20	0.21

Աղյուսակ 2

ՆՊՊ-ի գծով կատարված գործառնությունները 1995-2007թթ.

(մլն դրամ)

	Պետական պարտատոմսերի տեղաբաշխում	Պարտատոմսերի տեղաբաշխումից հասույթ	Պարտատոմսերի մարում	ՆՊՊ-ի սպասարկում	Դեֆիցիտի ֆինանսավորում
1995 թ.	750.7	717.6	516.7	24.0	200.9
1996 թ.	19,438.6	17,299.9	8,836.5	592.3	8,463.4
1997 թ.	41,360.0	32,998.1	23,886.6	4,524.3	9,111.5
1998 թ.	36,567.8	29,728.2	31,636.7	9,329.8	-1,908.6
1999 թ.	57,561.9	47,757.6	46,801.4	10,801.6	956.2
2000 թ.	44,847.2	40,744.4	38,962.4	9,353.9	1,782.0
2001 թ.	45,914.6	41,890.4	35,935.7	6,541.5	5,954.7
2002 թ.	41,883.8	38,202.8	34,255.5	5,955.3	3,947.3
2003 թ.	43,300.0	40,267.0	37,963.7	5,587.3	2,303.3
2004 թ.	43,900.0	44,018.2	38,435.5	5,408.2	5,582.7
2005 թ.	46,800.0	45,701.6	39,333.4	5,066.4	6,368.1
2006 թ.	32,253.6	32,474.9	25,392.1	5,251.1	7,082.8
2007թ.	39,330.4	40,025.3	30,776.6	6,550.4	9,248.7

Գծապատկեր 2

ՆՊՊ-ի գործիքակազմը 1995-2007 թթ.

(մլն դրամ)



2007 թվական

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական պարտատոմսերը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը.

- ՊՊ-ի ծավալն անվանական արժեքով կազմել է 66,303.2 մլն. դրամ, որից պետական կարճաժամկետ պարտատոմսերը՝ 7,000.0 մլն. դրամ, միջին ժամկետայնության պարտատոմսերը՝ 47,421.2 մլն. դրամ, երկարաժամկետ պարտատոմսերը՝ 11,710.6 մլն. դրամ և խնայողական պարտատոմսեր 171.4 մլն. դրամ:
- ՊՊ-ի գծով դեֆիցիտի ֆինանսավորումը կազմել է 9,248.7 մլն. դրամ:

- ՊՊ միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 7.05%:
- ՊՊ-ի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1258 օր (ՊԿՊ-եր՝158 օր, ՄԺՊ-եր՝ 878 օր, ԵՊ-եր՝ 3467 օր և ԽՊ-եր՝ 231 օր):

Աղյուսակ 3

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՊՊ-ն բնութագրող ցուցանիշներ

	առ 31.12.2005թ	առ 31.12.2006թ	առ 31.12.2007թ
Ներքին պետական պարտքը այդ թվում՝	**51,347.49**	**70,697.01**	**75,429.8**
Պետական պարտատոմսեր անվանական արժեքով (մլն.դրամ) որից՝	51,347.49	70,697.01	66,303.2
կարճաժամկետ պարտատոմսեր (մլն.դրամ)	6,500.00	7,699.6	7,000.0
միջին ժամկետ. պարտատոմսեր (մլն.դրամ)	36,487.49	38,087.8	47,421.15
երկարաժամկետ պարտատոմսեր (մլն.դրամ)	8,360.00	12,175.4	11,710.62
Խնայողական պարտատոմսեր (մլն.դրամ)	-	-	171.43
*ԿԲ վերակապիտալիզացիայի համար տրամադրված պարտատոմսեր**	-	12,734.2	-
ՀՀ ռեզիդենտից ստացված վարկ (մլն.դրամ)**	-	-	9,126.6
ՊՊ ժամկետայնությունը (օր) որից՝	**1100**	**1348**	**1258**
կարճաժամկետ պարտատոմսերի համար (օր)	190	74	158
միջին ժամկետ. պարտատոմսերի համար (օր)	721	766	878
երկարաժամկետ պարտատոմսերի համար (օր)	3465	3977	3467
Խնայողական պարտատոմսերի համար (օր)	-	-	231
ՊՊ եկամտաբերությունը (%) որից՝	**7.3085**	**7.0844**	**7.0480**
կարճաժամկետ պարտատոմսերի համար (%)	3.8002	5.2225	6.0191
միջին ժամկետ. պարտատոմսերի համար (%)	7.7077	6.9699	6.8795
երկարաժամկետ պարտատոմսերի համար (%)	8.2936	8.6203	8.3414
Խնայողական պարտատոմսերի համար (%)	-	-	7.4374
ՆՊՊ / ՀՆԱ (%)	**2.29**	**2.66**	**2.11**

*- ՀՀ ԿԲ վերակապիտալիզացայի նպատակով 2006թ. ապրիլի 27-ի N 567-Ա որոշման հիման վրա տրամադրված պետական պարտատոմսերը 2007թ-ի հունիսի 28-ին ամբողջությամբ մարվեցին: Փոխարենը, ՀՀ ԿԲ-ին 2007թ-ի հունիսի 6-ի N 606-Ա կառավարության որոշմամբ տրամադրեցին անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակներ:
**- վարկը ստացվել է ԱՄՆ դոլարով՝ 30.0 մլն դոլար ծավալով:

Գծապատկեր 3

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՊՊ-ի կառուցվածքն ըստ թողարկման ժամկետայնության



ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2007 թվականին «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով պետական պարտատոմսերի հաշվին նախատեսվում էր բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորել 8,500.0 մլն. դրամով և վճարել 7,809.4 մլն. դրամ սպասարկման ծախս:

2007 թվականի ընթացքում տեղի է ունեցել 25 թողարկում, որից 7-ը՝ ՊԿՊ, 14-ը՝ ՄԺՊ, 4-ը՝ ԵՊ թողարկումներ են: Թողարկվել է 39.5 մլրդ. դրամ ծավալով պարտատոմս: Պահանջարկը կազմել է 81.4 մլրդ. դրամ, հետևաբար, պետական պարտատոմսերի թողարկման ծավալի նկատմամբ պահանջարկը գերազանցել է 2.06 անգամ: Տեղաբաշխվել է 39.0 մլրդ. դրամ: Պետական պարտատոմսերի տեղաբաշխման ծավալի մեջ ՊԿՊ-երը կազմել են 7.0 մլրդ. դրամ (18%-ը), ՄԺՊ-երը՝ 26.0 մլրդ. դրամ (67%-ը), իսկ ԵՊ-ները 6.0 մլրդ. դրամ (15%-ը): Տարվա ընթացքում կատարված ՊԿՊ մեկ թողարկման ծավալը միջինը կազմել է մոտ 1,000.0 մլն. դրամ, ՄԺՊ-ն՝ 1,700.0 մլն. դրամ, ԵՊ-ն՝ 1,500.0 մլն. դրամ: 2007 թվականի հունվարից առաջին անգամ թողարկվել են խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր, որոնք ոչ շուկայական (ոչ շրջանառելի) պարտատոմսեր են և տեղաբաշխվում են գանձապետական պահառու համակարգի միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել ԽԱՊ-երի 17 թողարկում՝ 1,000.0 մլրդ. դրամ ծավալով, որից տեղաբաշխվել է 330.4 մլն. դրամը: 2007թ-ի ընթացքում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը իրականացրել է պարտատոմսերի ամենամսյա հետգնում՝ 10,849.3 մլն. դրամ ընդհանուր ծավալով: Հիմնականում հետ են գնվել երկարաժամկետ պարտատոմսեր, որոնց հետգնման նպատակը 2008թ-ից ուղենիշային պարտատոմսերի թողարկման ծրագրի իրականացմանը նախապատրաստվելն էր:

2007թ.-ի ընթացքում կատարված տեղաբաշխումների միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1302 օր, տեղաբաշխման եկամտաբերությունները տատանվել են 5.6%-9.5%-ի սահմաններում, իսկ տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 6.7812%: (տես աղ. 3):

Աղյուսակ 4

2007թվականի ընթացքում տեղաբաշխված ՊՊ-երի եկամտաբերության և ժամկետայնության ցուցանիշներն ըստ ամիսների

Ամիսներ	Նվազագույն եկամտաբերություն (%)	Առավելագույն եկամտաբերություն (%)	Միջին կշռված եկամտաբերություն (%)	Տեղաբաշխման միջին կշռված ժամկետ (օր)
Հունվար	5.6600	7.2559	6.7371	1095
Փետրվար	5.7500	7.1600	6.6785	1339
Մարտ	5.9000	8.0400	7.1947	1781
Ապրիլ	6.1400	7.1899	6.8380	1031
Մայիս	5.7500	7.0000	6.6460	1308
Հունիս	5.9000	6.8800	6.3638	1599
Հուլիս	4.6666	6.8250	6.2302	883
Օգոստոս	1.5000	6.7999	6.3731	1339
Սեպտեմբեր	5.9800	7.0000	6.5670	1426
Հոկտեմբեր	6.4900	7.0184	6.7936	1031
Նոյեմբեր	6.0000	7.2777	6.9265	1339
Դեկտեմբեր	6.4500	9.6713	8.6765	1790
Ընդամենը	1.5000	9.6713	6.7812	1302

Աղյուսակ 5

2007թվականի ընթացքում ՊՊ-ով կատարված գործառնություններն ըստ եռամսյակների

(մլն դրամ)

Եռամսյակներ	Թողարկում	Տեղաբաշխում	Հասույթ	Մարում	Սպասարկում	Դեֆիցիտի ֆինանսավորում
I	9,350.0	9,150.3	9,266.5	11,399.6	1,224.7	-2,133.1
II	9,700.0	9,524.1	9,820.7	6,185.8	1,253.8	1,501.8
III	11,700.0	11,531.7	11,779.8	8,613.9	2,383.3	4667.7
IV	9,750.0	9,124.2	9,158.3	4,577.3	1,688.5	9,248.7
Ընդամենը	39,500.0	39,330.3	40,025.3	30,776.6	6,550.3	9,248.7

2007 թվականին պարտատոմսերի տեղաբաշխումից հասույթը գերազանցել է ՊՊ-ի տեղաբաշխման անվանական ծավալը (տես աղ. 4): Պատճառն այն է, որ տարվա ընթացքում թողարկված բոլոր ՄԺՊ-երն ու ԵՊ-երը տեղաբաշխվել են հավելավճարով (պարտատոմսերն իրացվել են անվանական արժեքից բարձր գնով):

2007 թվականի ընթացքում պետական պարտատոմսերի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտն օրենքով նախատեսվածից ավել է ֆինանսավորվել 748.7 մլն. դրամով և կազմել 9,248.7 մլն. դրամ, իսկ սպասարկման ծախսերը (տոկոսավճարները) տնտեսվել են 1,259.1 մլն. դրամով՝ կազմելով 6,550.3 մլն. դրամ: Սպասարկման ծախսերի տնտեսման պատճառը 2007թ-ի հունիսի 28-ին ՀՀ ԿԲ վերակապիտալիզացիայի նպատակով տրամադրված 12.7 մլրդ. դրամ ծավալով պարտատոմսերի փոխարինումն է անտոկոս մուրհակներով, որի հետևանքով այս պարտատոմսերի համար նախատեսված 1,209.4 մլն. դրամի սպասարկման ծախսի փոխարեն վճարվել է 273.5 մլն. դրամ:

Գծապատկեր 4

ՆՊՊ-ի եկամտաբերության և ժամկետայնության շարժը 2007 թվականին



Գծապատկեր 4-ից երևում է, որ 2007թ-ի ընթացքում պետական պարտատոմսերի ժամկետայնությունը կրճատվել է, իսկ եկամտաբերությունը՝ փոքր ինչ նվազել: ՊՊ ժամկետայնության նվազումը պայմանավորված է նախորդ տարվա համեմատ երկարաժամկետ պարտատոմսերի թողարկման ժամկետի կրճատմամբ՝ առավելագույնը 8 տարի, որը հնարավորություն տվեց խուսափել եկամտաբերության շարունակական աճից: ՊՊ-րի մարումների բաշխվածությունը կազմել է տասնհինգ տարի՝ մինչև 2021թ-ը: Տարվա ընթացքում նկատելի է ԵՊ-երի նկատմամբ պահանջարկի աճ, որը կարելի է բացատրել ինչպես ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից պարբերաբար իրականացվող հետգնումներով, այնպես էլ ԵՊ-ների համեմատաբար բարձր եկամտաբերությամբ: ՀՀ դրամով պահուստավորվող միջոցների համար ավելցուկային իրացվելիության ազդեցությունը պահանջարկի վրա փոքր ինչ մեղմվել է՝ պայմանավորված ԿԲ կողմից սեփական պարտատոմսերի թողարկմամբ (տես գծ. 5):

Գծապատկեր 5

Բանկային համակարգում առկա ավելցուկային իրացվելիության և ՊՊ-երի պահանջարկ/թողարկում կապը 2007 թվականին (երկշաբաթյակներով)



Ինչ վերաբերվում է ՊՊ-երի նկատմամբ ձևավորված պահանջարկին, ապա դրա 97.86 %-ը (79.7 մլրդ. դրամ) ձևավորվել է գործակալների և դիլերների սեփական միջոցների, իսկ 2.14%-ը (1.7 մլրդ. դրամ)՝ նրանց ներդրողների հաշվին: 2007թ-ին պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ժամանակ մասնակիցների կողմից ձեռք բերված պարտատոմսերի 73.3%-ը բաժին է ընկնում 8 գործակալներին, 25.4%-ը՝ 13 դիլերներին, 1.3%-ը՝ գանձապետական պահառու համակարգին:

Պետական պարտատոմսերի սեփականատերերի կառուցվածքում տարվա վերջի դրությամբ գերակշռում են ՀՀ բանկերը՝ 95.07% տեսակարար կշռով (տես գծ. 6):

Գծապատկեր 6

ՊՊ-երի սեփականատերերի կառուցվածքը 2007 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ



2007 թվականը ՊՊ շուկայի զարգացման տեսանկյունից բեկումնային տարի է, քանի որոշում կայացվեց 2008 թվականից անցնել նոր՝ ուղենշային պարտատոմսերի թողարկմանը: 2007թվականին մշակվեցին և ընդունվեցին անհրաժեշտ իրավական ակտերը: Ուղենշային պարտատոմսերը թողարկվելու են մեծ ծավալներով, որոնք տեղաբաշխվելու են աստիճանաբար՝ մի քանի տարվա ընթացքում: Դրանք առավել գրավիչ են ներդրողների համար, քանի որ բնորոշվում են բարձր իրացվելիությամբ:

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2007 թվականի ընթացքում ՊՊ երկրորդային շուկայում կատարված առք ու վաճառքի գործարքներն ունեն հետևյալ տեսքը՝

- Կատարվել են 969 գործարքներ, որոնք բոլորը միջբանկային գործարքներ են: ԿԲ-ի կողմից գործարքներ չի կատարվել:
- Գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 90,499.7 մլն. դրամ,
- Ըստ պարտքային գործիքների տեսակի երկրորդային շուկայում շրջանառել են.
  - ՊԿՊ՝ 8,277.9 մլն. դրամ
  - ՄԺՊ՝ 55,804.0 մլն. դրամ
  - ԵՊ՝ 26,417.8 մլն. դրամ
- Կատարված գործարքների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 6.6080%
- Միջին կշռված ժամկետայնությունը՝ 1822 օր
- Միջին օրական ծավալը՝ 360.6 մլն. դրամ

- Գործարքների միջին օրական քանակը՝ 4:

Գծապատկեր 7

2007 թվականին երկրորդային շուկայում կատարված գործառնություններն ըստ ժամկետայնության



	1-91 օր	92-182օր	183-364 օր	1-3 տարի	3-4 տարի	4-5 տարի	5 և ավել տարի
գործ. ծավալ (մլն.դրամ)	1,768	1,260	9,401	13,997	17,665	19,971	26,438
եկամտ. (%)	4.44	5.73	5.85	5.94	6.44	6.73	7.44

Շրջանառության մեջ ՊԿՊ-ների տեսակարար կշիռը վերջին տարիներին խիստ նվազել է, որի հետևանքով երկրորդային շուկայում ևս ՊԿՊ-երով գործառնությունների ծավալները բավականին կրճատվել են՝ մոտ 3 անգամ: Շրջանառության մեջ ՊԿՊ-ների ծավալի նվազումը պայմանավորված է կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային շուկայի հագեցվածությամբ ԿԲ թողարկած պարտատոմսերով[1]:

Գծապատկեր 8

Կատարված գործարքների մեջ ՊԿՊ-ների, ՄԺՊ-ների և ԵՊ-ների տեսակարար կշիռը.



Գծապատկեր 9

[1] 2007 թվականին ԿԲ-ը տեղաբաշխել է 138.0 մլրդ. դրամ ծավալով կարճաժամկետ պարտատոմսեր՝ 6.27% միջին կշռված եկամտաբերությամբ: Համեմատության համար նշենք, որ 2006 թվականին թողարկվել է 76.5 մլրդ. դրամ ծավալով կարճաժամկետ պարտատոմսեր, որոնց միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 5.44%:

2007 թվականին երկրորդային շուկայում կատարած գործարքներն ըստ ամիսների



Աղյուսակ 6

Պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի ծավալներն ու եկամտաբերությունները 2000-2007 թվականներին

	գործարքների ընդհանուր ծավալ (մլն. դրամ)	միջին եկամտաբերություն (%)	կատարված գործարքների քանակը	միջին օրական ծավալը (մլն. դրամ)	միջին օրական քանակը
2000թ.	73,930.9	24.69	2469	289.4	9
2001թ.	53,906.6	19.78	1489	211.4	6
2002թ.	43,288.7	15.07	1013	171.1	4
2003թ.	48,881.6	12.71	1229	194.8	5
2004թ.	45,716.1	6.64	734	180.7	3
2005թ.	77,200.9	5.43	1466	303.9	4
2006թ.	66,723.7	6.24	727	261.7	3
2007թ.	90,499.7	6.61	969	360.6	4

ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՌՈՒ

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Գանձապետական պահառուի կողմից իրականացված գործառնություններն ունեցել են հետևյալ տեսքը.

- մասնակցել է կազմակերպված ՊԿՊ–երի բոլոր 7 թողարկումներին, իսկ ԽԱՊ-երի 17 թողարկումներից միայն մեկում ներդրում չի կատարվել,
- ներդրման ծավալը կազմել է 854.5 մլն դրամ, որից 524.1 մլն ՊԿՊ-եր և 330.4 մլն ԽԱՊ-եր,
- թողարկված ՊԿՊ-երի 7.5 % ձեռք է բերվել ԳՊ-ի միջոցով (ԳՊ-ի ձեռք բերման առավելագույն ծավալը սահմանվել է թողարկման ծավալի 10%-ի չափով),
- մարվել է 1,127 մլն. դրամի պարտատոմս, որից 970.4 մլն ՊԿՊ-եր և 156.6 մլն ԽԱՊ-եր,
- 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդամենը շրջանառության մեջ է եղել 695.5 մլն. դրամի պարտատոմս, որից 524.1 մլն ՊԿՊ-եր և 171.4 մլն ԽԱՊ-եր,
- դեպո հաշիվների քանակը կազմել է 738, որոնցից 49-ը բացվել են հաշվետու ժամանակահատվածում,
- շրջանառության մեջ եղած պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 147 օր, որտեղ ՊԿՊ-երի համար այն կազմել է 119 օր, իսկ ԽԱՊ-երի համար՝ 232,
- մեկ ներդրողի կողմից ներդրման միջին ծավալը կազմել է 12.2 մլն. դրամ, որտեղ ՊԿՊ-երի գծով այն եղել է 52.4 մլն դրամ, իսկ ԽԱՊ-երի գծով՝ 5.5 մլն դրամ,
- ներկայացված հայտերում ներդրման միջին ծավալը կազմել է 7.4 մլն. դրամ, որտեղ ՊԿՊ-երի գծով այն եղել է 32.8 մլն դրամ, իսկ ԽԱՊ-երի գծով՝ 3.3 մլն դրամ,
- պարտատոմսերի մեկ թողարկմանը ներկայացվել է միջինը 4.8 հայտ, որտեղ ՊԿՊ-երի մեկ թողարկմանը ներկայացվել է միջինը 2.3 հայտ, իսկ ԽԱՊ-երի մեկ թողարկմանը ներկայացվել է միջինը 5.9 հայտ:

Ներդրման ծավալը 2006թ-ի նկատմամբ նվազել է 30.0%-ով, իսկ ԳՊ-ով ձեռք բերված և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 28.3%-ով (տես գծ. 10):

Գծապատկեր 10

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը 2007թ.

(մլն դրամ)



Ներդրման և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալների նվազումը հետևանք է 2007թ-ին 2006թ-ի համեմատ գրեթե երկու անգամ ՊԿՊ-երի թողարկման ծավալի նվազման:

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեպո հաշիվների քանակը կազմել է 738, որը 49-ով ավելին է եղել նախորդ տարվա նույն ցուցանիշից (տես գծ. 11):

Գծապատկեր 11

Դեպո հաշիվների դինամիկան 2007թ.



Դեպո հաշիվների քանակի զգալի աճը պայմանավորված է 2007թ. նոր տեսակի պարտատոմսերի՝ ԽԱՊ-երի թողարկմամբ, որոնք վաճառվում են միայն Գանձապետական պահառուի միջոցով և միայն ֆիզիկական անձանց:

Աղյուսակ 4

ԳՊ-ի կողմից 2007թ-ի ընթացքում ՊԿՊ-երով կատարված գործառնությունները

(մլն դրամ)

Ժամկետը	Մարում	Սպասարկում	Ընդամենը	Տեղաբաշխում	Տեղաբաշխվածի կշիռը (%)	Թողարկումների քանակը	Մեկ թողարկման ներդրման միջին ծավալը
1-13 շաբաթ	297.5	2.5	300.0	-	-	-	-
27-39 շաբաթ	287.8	10.2	298.0	100	100	1	100
40-52 շաբաթ	355.7	16.7	372.4	424.1	70.7	6	70.7
Ընդամենը	941.0	29.4	970.4	524.1	74.9	7	74.9

Աղյուսակ 5

ԳՊ-ի կողմից 2007թ-ի ընթացքում ԽԱՊ-երով կատարված գործառնությունները
(մլն դրամ)

Ժամկետը	Մարում	Արժեկտրոնի սպասարկում	Ընդամենը	Տեղաբաշխում	Տեղաբաշխվածի կշիռը (%)	Թողարկումների քանակը	Մեկ թողարկման ներդրման միջին ծավալը
Մինչև 1 տարի	158.9	7.5	166.4	215.6	43.1	9	24.0
1 - 2 տարի	-	0.9	0.9	114.8	23.0	8	14.4
Ընդամենը	158.9	8.4	167.3	330.4	33.0	17	19.4

Գծապատկեր 12

ԳՊ-ի միջոցով շրջանառության մեջ եղած պարտատոմսերի կշիռը 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ


25%
75%
ՊԿՊ
ԽԱՊ

ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 1448.9 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված երաշխիքների գծով արտաքին պարտավորությունները կազմել են 1281.9 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր արտաքին պետական պարտքի 88.5%), իսկ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները՝ 167.0 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր արտաքին պետական պարտքի 11.5%):

2006թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ հանրապետության արտաքին պետական պարտքի ծավալը աճել է 20.7 %-ով կամ 243.3 մլն ԱՄՆ դոլարով, որը պայմանավորված է եղել ինչպես ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ արտաքին պետական պարտքի զամբյուղը ներկայացնող հիմնական արտարժույթների փոխարժեքների փոփոխությամբ1, այնպես էլ 2007թ. ընթացքում կատարված գործառնություններով:

Գծապատկեր 13

ՀՀ արտաքին պետական պարտքի մեծության փոփոխությունը և նրա վրա ազդող գործոնները



2007 թվականի ընթացքում արտաքին պետական պարտքի գծով կատարվել են հետևյալ գործառնությունները.

---

[1] 31.12.2006թ. դրությամբ 1SDR=1.5044USD, 1EUR= 1.317 USD
31.12.2007թ. դրությամբ 1SDR=1.58025USD, 1EUR= 1.4721 USD

Աղյուսակ 6

ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը և արտաքին վարկային միջոցների ստացումները 2007թ. ընթացքում

(մլն ԱՄՆ դոլար)

	Ստացում	Սպասարկում		
		ընդամենը	այդ թվում	
			մարում	տոկոսավճար
Ընդամենը	**216.184**	**51.289**	**40.699**	**10.590**
այդ թվում՝				
I. ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով արտաքին պարտավորություններ	**197.308**	**26.611**	**16.939**	**9.672**
որից՝				
1. Միջազգային կազմակերպություններ	*106.175*	*23.145*	*15.053*	*8.092*
ա) Համաշխարհային Բանկ	91.896	15.170	7.889	7.281
որից՝				
Զարգացման Միջազգային Ընկերակցություն	91.896	14.083	7.133	6.950
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	-	1.087	0.756	0.331
բ) Գյուղ. Զարգացման Միջազգային Հիմնադրամ	4.173	0.660	0.273	0.387
գ) Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) Միջազգային Զարգացման Հիմնադրամ	10.106	0.091	-	0.091
դ) Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	-	7.224	6.891	0.333
2. Օտարերկրյա պետություններ	*91.133*	*3.465*	*1.886*	*1.580*
ա) ԱՄՆ	-	2.626	1.842	0.784
բ) Գերմանիա (KfW)	4.172	0.732	-	0.732
գ) Ֆրանսիա	-	0.078	0.044	0.035
դ) Ճապոնիա	86.961	0.029	-	0.029
II. ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ	**18.876**	**24.678**	**23.760**	**0.918**
որից՝				
1. Միջազգային կազմակերպություններ	***10.310***	***24.569***	***23.760***	***0.809***
ա) Արժույթի Միջազգային Հիմնադրամ	10.310	24.569	23.760	0.809
2. Օտարերկրյա պետություններ	**8.566**	**0.109**	**-**	**0.109**
ա) Գերմանիա (KfW)	8.566	0.109	-	0.109

* Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման նպատակով KfW-ի կողմից ՀՀ կառավարության երաշխիքի հիման վրա տրամադրված վարկի սպասարկումը իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից, սակայն նշված վարկի գծով պարտքը (2007թ. դրությամբ 24.689 մլն ԱՄՆ դոլար) և դրա սպասարկումը (2007թ. ընթացքում 0.176 մլն ԱՄՆ դոլար) ներառված է կառավարության պարտքի մեջ:

2007թվականին ամբողջությամբ մարվել են Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի կողմից նախկինում տրամադրված վարկերը, սակայն ստորագրվել է մեկ նոր վարկային համաձայնագիր:

2007 թվականին վարկային համաձայնագրեր են ստորագրվել նաև երկու նոր վարկատուների հետ՝ Ասիական Զարգացման Բանկի և Աբուդաբիի Զարգացման Հիմնադրամի հետ:

2007թ. ընթացքում ընդհանուր առմամբ ստորագրվել են 11 նոր վարկային համաձայնագրեր՝

Զարգացման Միջազգային Ընկերակցության հետ 5 վարկային համաձայնագրեր (64 մլն SDR ընդհանուր գումարով, վարկառու Հայաստանի Հանրապետություն)2,

Ասիական Զարգացման Բանկի հետ 2 վարկային համաձայնագիր (43.573 մլն SDR ընդհանուր գումարով, վարկառու Հայաստանի Հանրապետություն)

Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի հետ 1 վարկային համաձայնագիր (7 մլն EUR գումարով, վարկառու Հայաստանի Հանրապետություն),

Միջազգային Զարգացման ՕՊԵԿ Հիմնադրամի հետ 1 վարկային համաձայնագիր (10 մլն ԱՄՆ դոլար գումարով, վարկառու Հայաստանի Հանրապետություն),

Աբուդաբիի Զարգացման Հիմնադրամի հետ 1 վարկային համաձայնագիր (36.73 մլն AED (ՄԱԷ դիրհամ) գումարով, վարկառու Հայաստանի Հանրապետություն)

Գերմանիայի (KfW) հետ ստորագրված մեկ վարկային համաձայնագրում կատարվել է փոփոխություն՝ համաձայն որի վարկի գումարը ավելացվել է (12 մլն EUR գումարով, վարկառու ՀՀ կենտրոնական բանկ):

Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշների շարունակական բարելավման միտումը պահպանվել է նաև 2007 թվականին3:

2007 թվականին զգալիորեն նվազել է արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը:

Գծապատկեր 14

ՀՀ արտաքին պետական պարտքի և արտաքին պետական պարտք / ՀՆԱ ցուցանիշի դինամիկան



Ցուցանիշի նվազումը արդյունք է ոչ միայն ՀՆԱ-ի աճի, այլ նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի արժեվորման:

2001-2007թթ ընթացքում Հայաստանի արտաքին պետական պարտքը կազմված է եղել չորս արժույթներով՝ USD, SDR, EUR և JPY, տրամադրված վարկերից:

Գծապատկեր 15

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ տրամադրման արժույթի

---

[2] 31.12.2007թ. դրությամբ գործող արտաքին պետական վարկային համաձայնագրերի վերաբերյալ տեղեկատվությունը տես հավելված 2-ում:

[3] ՀՀ արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող որոշ ցուցանիշների գծով տվյալները տես հավելված 1-ում:



ՀՀ արտաքին պետական պարտքի մեջ արտոնյալ վարկերը 2007թ. վերջին կազմել են 99.2%:

Գծապատկեր 16

ՀՀ արտաքին պետական պարտքի արտոնյալության դինամիկան



2007թ. վերջի դրությամբ միայն Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ու Միջազգային Զարգացման ՕՊԵԿ Հիմնադրամի կողմից տրամադրված մեկական վարկերն են եղել առևտրային պայմաններով:

Գծապատկեր 17

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների
2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ


Գյուղ. Զարգ. Միջ. Հիմն. 3.9%
ՕՊԵԿ-ի Միջ. Զարգ. Հիմն. 0.8%
Վեր. և Զարգ. Միջ. Բանկ 0.4%
Արժույթի Միջ. Հիմն. 10.9%
ԱՄՆ 2.7%
Գերմանիա (KfW) 7.6%
Օտարերկրյա պետություններ 16.9%
Ֆրանսիա 0.4%
Ճապոնիա 6.2%
Զարգ. Միջ. Ընկ. 67.2%